/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ վիճակագրական կոմիտե

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Վրաստան/Թբիլիսի/25.07-26.07.2019 թ.

- **Նպատակը**

Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի և ՄԱԿ Կանայք կողմից կազմակերպված "Ըստ սեռի վիճակագրություն, Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) մշտադիտարկման մարտահրավերներ և հնարավորություններ" խորագրով Միջազգային կոնֆերանս նվիրված Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի 100-ամյակին և ըստ սեռի վիճակագրության հավաքագրման 20-ամյակին

- **Քննարկված թեմաները**

Երկօրյա միջոցառումը նպատակ ուներ կատարելագործել գենդերային քաղաքականության բարելավմանն ուղղված գիտելիքները և տարածել տվյալների և փաստերի վրա հիմնված վիճակագրության արտադրման հաջողված փորձերը՝ Կայուն զարգացման 2030թ. օրակարգի համատեքստում:

Միջազգային կոնֆերանսին ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.

հուլիսի 25-ին

Նստաշրջան 1. Կոնֆերանսի բացում և ողջույնի խոսք

Գոգիտա Տոդրաձե, գործադիր տնօրեն, Վրաստանի ազգային վիճակագրության գրասենյակ

Թամար Չուգոշվիլի, Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ

Պապա Սեք, գլխավոր վիճակագիր, ՄԱԿ Կանայք

Վերներ Տատ, տարածաշրջանային տնօրենի տեղակալ, Հարավային Կովկասի շվեյցարական համագործակցության գրասենյակ

Նստաշրջան 1 ա. Վրաստանում վիճակագրության զարգացման 100 տարին, ձեռքբերումներ և մարտահրավերներ

Գոգիտա Տոդրաձե, գործադիր տնօրեն, Վրաստանի ազգային վիճակագրության գրասենյակ

Հարցեր և պատասխաններ

Նստաշրջան 2. ԿԶՆ-ի ազգայնացման ձեռքբերված առաջընթացը

Մոդերատոր՝ Պապա Սեք, գլխավոր վիճակագիր, ՄԱԿ Կանայք

ԿԶՆ-ի ազգային առաջընթացը, վարչապետի գրասենյակ

ԿԶՆ-ի հաշվետվողականության ազգային շրջանակ, Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

Տվյալների դեզագրեգացիայի փորձը ԿԶՆ-ի մշտադիտարկման համար, Ելենա Կուխարևիչի, Բելառուսի ազգային վիճակագրական գրասենյակի փոխտնօրեն

Գենդերին առնչվող ԿԶՆ-ի ցուցանիշների վերաբերյալ աշխատանքը, Ռաուֆ Սալիմով, Ադրբեջանի Հանրապետության պետական վիճակագրական կոմիտեի փոխնախագահ

Հարցեր և պատասխաններ

Նստաշրջան 3. Ներառելով գենդերը վիճակագրական բիզնես արտադրության գործընթացում

Մոդերատոր՝ Էլմիրա Ալիմկուլովա, Ղրղզստանի Հանրապետության ազգային վիճակագրության կոմիտեի առաջին փոխտնօրեն

Ըստ սեռի վիճակագրության բացերի սահմանման շրջանակը ազգային վիճակագրական համակարգում, Պապա Սեք, գլխավոր վիճակագիր, ՄԱԿ Կանայք

Ազգային վիճակագրական համակարգի գենդերային գնահատման օգտագործումը՝ իրազեկելու 2019-2023 թթ. վիճակագրության զարգացման ազգային ռազմավարության մշակման վերաբերյալ, Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակ

Ազգային վիճակագրական համակարգի գենդերային գնահատում, առաջ շարժվելու ճանապարհը, Անդրեյ Գերասիմենկո, սոցիալական վիճակագրության բաժին, Ուկրաինայի ազգային վիճակագրական գրասենյակ

Ըստ սեռի վիճակագրությանն օժանդակող ինստիտուցիոնալ շրջանակ, Ասեմգուլ Աբրաևա, Կայուն զարգացման նպատակների վիճակագրության բաժնի գլխավոր փորձագետ, Ղազախստանի ազգային վիճակագրական գրասենյակ

Հարցեր և պատասխաններ

Նստաշրջան 4. Տարածում և ըստ սեռի վիճակագրության հաղորդակցում

Մոդերատոր՝ Ալլա Նեգրուտա, ՄԱԿ Կանայք

Ըստ սեռի վիճակագրության սպառողների կարիքների չափումն ու բավարարումը, Մարիա Ջիուսի Մուրատորե, Իտալիայի վիճակագրության ազգային ինստիտուտ (Ինստատ)

Տվյալների վիզուալիզացիայի կարևորությունը՝ տվյալների օգտագործումը խթանելու համար, Վիտալի Վալկով, գլխավոր տնօրեն, Մոլդովայի վիճակագրության ազգային բյուրո

Շնորհանդես ըստ սեռի վիճակագրության պորտալի վերաբերյալ, Լիա Չարեքիշվիլի, Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակ

Դասթին Գիլբրեթ, Կովկասի հետազոտության ռեսուրսների կենտրոն

Հարցեր և պատասխաններ

հուլիսի 26-ին

Նստաշրջան 5. Թեմատիկ քննարկում, գենդերային վճար և մասնակցության բացեր

Մոդերատոր՝ Դմիտրի Ցկիտիշվիլի, Վրաստանի խորհրդարանի անդամ

Չափելով վաստակի գենդերային տարբերությունները, Դենիս Լեյթիեն, «Աշխատանքային շուկայի ցուցանիշների» թիմի ղեկավար, Եվրոստատ

Վրաստանում հարմարեցված գենդերային վճարի բացի վերլուծություն, Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակ

Գենդերային վճարի բացը չափելու ազգային փորձը, Անդրեյ Գերասիմենկո, սոցիալական վիճակագրության բաժին, Ուկրաինայի ազգային վիճակագրական գրասենյակ

ԿՀՆ-ի աշխատանքային շուկայի գլխավոր ցուցանիշների չափումը գենդերային հեռանկարից, Ժիլդիզ Ռախմանովա, Ղրղզստանի ազգային վիճակագրական գրասենյակ

Հարցեր և պատասխաններ

Նստաշրջան 6. Թեմատիկ քննարկում, Ակտիվների սեփականություն և ձեռնարկատիրություն

Մոդերատոր՝ պ. Ռաուֆ Սալիմով, Ադրբեջանի Հանրապետության պետական վիճակագրական կոմիտեի փոխնախագահ

Ըստ սեռի և ձեռնարկատիրության վիճակագրություն, Անդրես Վիկատ, Սոցիալական և ժողովրդագրական վիճակագրության բաժնի ղեկավար, ՄԱԿ-ի ԵՏՀ

Ակտիվների սեփականության և ձեռնարկատիրության չափումը գենդերային հեռանկարից (փորձնական հետազոտություն), Գիգա Կիկորիա, սոցիալական վիճակագրության վարչության սոցիալական ենթակառուցվածքի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ, Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակ

Գենդերի ներառումը ձեռնարկատիրության վիճակագրության մեջ, Նադեժդա Կոժոկարի, Մոլդովայի վիճակագրության ազգային բյուրո

Տվյալների աղբյուրները ձեռնարկատիրության և ակտիվների սեփականության չափման համար՝ գենդերային տեսանկյունից, Լուսինե Քալանթարյան, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ, ՀՀ վիճակագրական կոմիտե

Հարցեր և պատասխաններ

Նստաշրջան 7. Ժամանակի օգտագործման վիճակագրություն, լավագույն փորձառություններն ու փորձը տարածաշրջանում

Մոդերատոր՝ Անդրես Վիկատ, Սոցիալական և ժողովրդագրական վիճակագրության բաժնի ղեկավար, ՄԱԿ-ի ԵՏՀ

Ժամանակի օգտագործման տվյալների հավաքագրումը, նորարարական գործիքներ և լուծումներ, Ջոաննա Գիցզի, Հունգարիայի կենտրոնական վիճակագրական գրասենյակ

Ժամանակի օգտագործման վիճակագրության ազգային փորձը, Իննա Կոնոշոնոկ, Բելառուսի ազգային վիճակագրական գրասենյակ

Ժամանակի օգտագործման վերաբերյալ տվյալների հավաքագրումը միջազգային ստանդարտներին համահունչ (Իկատուս) Ասեմգուլ Աբրաևա, Կայուն զարգացման նպատակների վիճակագրության բաժին, Ղազախստանի ազգային վիճակագրական գրասենյակ

Հարցեր և պատասխաններ

Նստաշրջան 8. Կանանց և աղջիկների նկատմամբ բռնության չափումը

Մոդերատոր՝ Էկա Սխիլաձե, օմբուդսմենի տեղակալ, Վրաստանի օմբուդսմենի գրասենյակ

Գենդերի վրա հիմնված բռնության վիճակագրության արտադրությունը Իտալիայում, Մարիա Ջիուսի Մուրատորե, Իտալիայի վիճակագրության ազգային ինստիտուտ (Ինստատ)

Կանանց բռնության դեմ ազգային հետազոտություն, մեթոդաբանություն և հիմնական արդյունքներ, Լիա Չարեքիշվիլի, Վրաստանի ազգայի վիճակագրական գրասենյակ

Մեթոդաբանական շրջանակ՝ կանանց դեմ բռնության գերակշռության չափման համար, Վրաստանում կանանց դեմ բռնության 2017 թ. ազգային հետազոտությունից քաղված դասերը, Թամար Վաշակիձե, ՄԱԿ Կանայք

Հարցեր և պատասխաններ

Հաքաթոնի հաղթողների հայտարարում

Կոնֆերանսի փակում:

Միջազգային կոնֆերանսի օրակարգի վերոնշյալ թեմաների շրջանակում ներկայացումներով հանդես եկան նաև Եվրոստատի, ՄԱԿ Կանայք, Գենդերային հավասարություն եվրոպական ինստիտուտի (EIGE), Վրաստանի վարչապետի աշխատակազմի, Ազգային ժողովի, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները:

Հայաստանը կոնֆերանսին ներկայացրեց **ԿԶՆ-ի ազգայնացման ձեռք բերված առաջընթացը խորագրով Նստաշրջան 2-ին** շնորհանդես "Հայաստանի փորձը" խորագրով՝ ներկայացնելով Հայաստանի հաջողված փորձը և ձեռքբերումներն ազգային համակարգման մեխանիզմների, սահմանումներին համապատասխանության ու տվյալների առկայության ինքնագնահատման, Գենդերային հավասարություն նպատակի ներքո տվյալների առկայության, ԿԶՆ-ի համար վիճակագրության մշակման, տարածման և հաղորդակցման, ԿԶՆ-ի վիճակագրության Ազգային հաշվետվողականության հարթակի մշակման, ստեղծման, գործարկման և "Հայաստան – Բաց ԿԶՆ-ի ուսումնասիրության օրինակի" վերաբերյալ, որը զետեղվել է Բաց Տվյալների Ձեռնարկության համար Կենտրոնի "Բաց ԿԶՆ-ի հանրություն" հատվածում (https://armstat.github.io/sdg-site-armenia/), ինչպես նաև Հայաստանի հաջողված փորձը վիճակագրական ներուժի ամրապնդման և զարգացման գործողությունների համակարգման վերաբերյալ:

Հայաստանը կոնֆերանսին ներկայացրեց նաև **Ակտիվների սեփականություն և ձեռնարկատիրություն խորագրով Նստաշրջան 6-ին** շնորհանդես "Տվյալների աղբյուրները գնահատելու ձեռնարկատիրական գործունեությունը և ակտիվների սեփականությունը գենդերային տեսանկյունից" խորագրով:

2019թ. հուլիսի 25-ին Վրաստանի վիճակագրական գրասենյակի 100-ամյակի կապակցությամբ մասնակից երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարներն ընդունեցին խորհրդանշական բնույթի համատեղ հայտարարություն՝ կարևորելով վիճակագրության դերը ժողովրդավար հասարակության կառուցման համար և երկրների վիճակագրական գրասենյակների միջև սերտ համագործակցության անհրաժեշտությունը՝ պաշտոնական վիճակագրության արդյունավետ արտադրման համար:

Հանձնառու լինելով բարելավելու պաշտոնական վիճակագրությունը 2030 թ. օրակարգի իրականացման հաշվետվողականության համար՝ երկրները

վերահաստատեցին հրատապ անհրաժեշտությունը հետագայում տվյալների բացերը լրացնելու և հասցեագրելու ԿԶՆ-ի համար դեզագրեգացված տվյալների հավաքագրման մարտահրավերները՝ «ոչ ոքի չթողնել ետևում» սկզբունքն ապահովելու համար:

Ելնելով վերոնշյալ նկատառումներից՝ երկրները պատրաստակամություն հայտնեցին՝ շարունակել խորացնել և խթանել արդյունավետ համագործակցությունը ազգային վիճակագրական գրասենյակների միջև, փոխանակվել փորձով պաշտոնական վիճակագրության արտադրման և տարածման ոլորտում, փոխանակել նոր մեթոդաբանությունների, տվյալների հավաքագրման և վերլուծության ժամանակակից տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվությունը, մասնակցել համատեղ նախագծերի՝ միջազգային ստանդարտները և միջազգայնորեն ընդունված լավագույն փորձառությունները ներմուծելու նպատակով, ինչպես նաև համագործակցել միջազգային գործընկերների հետ՝ մոդեռնիզացնելու վիճակագրական գործընթացները և խթանելու պաշտոնական վիճակագրության արժեքը՝ տեղեկացնելու որոշումների կայացմանը:

Նույն օրը երեկոյան տեղի ունեցավ Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի 100-ամյակին նվիրված պաշտոնական հանդիսությունը, որին ողջույնի խոսքով հանդես եկան Վրաստանի Վարչապետը, Պառլամենտի Խոսնակը, Վրաստանի, Հայաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի ազգային վիճակագրական գրասենյակների ղեկավարները:

- **Արդյունքները**

Մասնակցությունը կոնֆերանսին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին՝ քննարկելու ըստ սեռի վիճակագրության, ԿԶՆ-ի մշտադիտարկման մարտահրավերների և հնարավորությունների վերաբերյալ առկա խնդիրները, մարտահրավերները և հետագա անելիքները, ինչպես նաև նշյալ ոլորտի լավագույն փորձը:

Մասնակցությունը կոնֆերանսին կարևորվում է օրակարգի թեմաների շրջանակում գիտելիքների ձեռքբերման, ընդլայնման, ազգային փորձերի փոխանակման, ոլորտում առկա նորարություններին, միջազգային փորձին իրազեկ լինելու տեսանկյունից, ինչպես նաև գնահատելու Հայաստանում գենդերային վիճակագրության ասպարեզում առկա բացերը և ձեռքբերումները՝ մասնավորապես Կայուն զարգացման նպատակների լույսի ներքո, ուրվագծելու հետագա գործողությունների թիրախները՝ այդ ոլորտում փաստերի վրա հիմնված, գործունակ քաղաքականություն մշակելու նպատակով:

- **Նշումներ**

Միջազգային կոնֆերանսին մասնակցել են Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների ազգային վիճակագրական գրասենյակների բարձրաստիճան պաշտոնյաներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, տվյալների սպառողներ՝ այդ թվում քաղաքացիական հասարակությունից և զանգվածային լրատվամիջոցներից:

Միջազգային կոնֆերանսի ընթացքում տեղի ունեցան քննարկումներ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ ՄԱԿ Կանայք ներկայացուցիչների հետ, ինչպես նաև պայմանավորվածություն ձեռքբերվեց Հարավային Կովկասի շվեյցարական համագործակցության գրասենյակի տարածաշրջանային տնօրենի տեղակալ Վերներ Տատի հետ հուլիսի 30-ին կազմակերպել հանդիպում ՀՀ վիճակագրական կոմիտեում՝ հետագա համագործակցության հնարավորությունները քննարկելու նպատակով:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի համար ՄԱԿ Կանանք տարածաշրջանային գրասենյակի և ՄԱԿ Կանանք Վրաստանի գրասենյակի կողմից:

ՀՀ վիճակագրական կոմիտեի
նախագահ Ս. Մնացականյան